# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ „ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուրի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոց „ՊՈԱԿ-ի ֆիզիկա /9 դասաժամ/, մաթեմատիկա /11 դասաժամ/ և դասվար /20դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում/ձև 1/, մեկ լուսանկար 3x4չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ,
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. „Հանրակրթության մասին„ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճենը /առկայության դեպքում/,
5. Ինքնակենսագրություն /ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույք,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10. Հայաստանի հանրապետության կառավարման 2022 թվականի ապրիլի 28-ի N 596 որոշմամբ սահմանված կարգի համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն ( մասնակցած լինելու դեպքում):
11. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության սեպքում նաև՝ 2-րդ կետի )պահանջվող համապատասխան փաստաթուղթ.
12. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-ին կետի պահանջին համապատասխան տեղեկանք բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադաձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են են սեպտեմբերի 16-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին ,ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուրի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 74-58-94 հեռախոսահամարով